«Մարզային» սակագնային փաթեթի մատուցման պայմաններ

1. Բաժանորդագրվելով «Մարզային» սակագնային փաթեթին՝ Բաժանորդը պարտավորվում է 1 օրացուցային տարվա ընթացքում (365 օրացուցային օր) օգտվել «Մարզային» սակագնային փաթեթից և հնարավորություն է ստանում մինչև սակագնային փաթեթի պարտադիր բաժանորդագրության ժամկետի ավարտը գնել «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ վաճառքի և սպասարկման սրահներում վաճառվող 1 հատ Wi-Fi սարքավորում Հատուկ գնով:

2. «Մարզային» սակագնային փաթեթին բաժանորդագրության դեպքում ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով ծառայությունների մատուցման կասեցման դեպքում սակագնային փաթեթին բաժանորդագրության ժամկետը երկարում է ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ:

3. Եթե Բաժանորդը դադարեցնում է «Մարզային» սակագնային փաթեթին բաժանորդագրությունը մինչև սահմանված պարտադիր ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը Օպերատորին ամբողջապես վճարում է ընթացիկ պարտքը և տուգանք 15000 ՀՀ դրամի չափով՝ դադարեցման օրվանից հաշված 10 օրվա ընթացքում:

Այլ պայմաններ

1. Հնարավոր է իրականացնել «Մարզային» սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Ռինտերնետ», «Ռինտերնետ գործընկեր», «Տրիո կոնստրուկտոր» սակագնային փաթեթներին: Տվյալ դեպքում Բաժանորդը նոր սակագնային փաթեթին միանում է տվյալ սակագնային փաթեթի համար նախատեսված պայմաններով: Տվյալ գործարքն իրականացվում է «Մարզային» սակագնային փաթեթի վաղաժամ դադարեցման պայմանով, և այն իրականացվում է միայն «Մարզային» սակագնային փաթեթի վաղաժամ դադարեցման դեպքում սահմանված տուգանքների վճարումից հետո: Եթե սակագնային փաթեթի փոփոխությունն իրականացվում է «Մարզային» սակագնային փաթեթից օգտվելու համար սահմանված պարտադիր ժամկետի ավարտից հետո, ապա այն իրականացվում է առանց տուգանքների վճարման:

2. Հնարավոր է իրականացնել «Մարզային» սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Ռինտերնետ տարեկան», «Տրիո կոնստրուկտոր տարեկան», սակագնային փաթեթներին: Տվյալ դեպքում Բաժանորդը նոր սակագնային փաթեթին միանում է տվյալ սակագնային փաթեթի համար նախատեսված պայմաններով: Սույն կետով սահմանված կերպով փոխելով սակագնային փաթեթը՝ Բաժանորդը չի ստանում

նոր սակագնային փաթեթին բաժանորդագրության դեպքում տրամադրվող Wi-Fi սարքավորման 1 դրամով օգտագործման իրավունքը: Նոր սակագնային փաթեթին անցումը չի երկարացնում «Մարզային» սակագնային փաթեթով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետը: Եթե Բաժանորդը կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով սույն կետով սահմանված սակագնային փաթեթներից մեկին, և դադարեցնում է ծառայությունը «Մարզային» սակագնային փաթեթի ծառայություններից օգտվելու պարտադիր ժամկետից շուտ, ապա նա վճարում է «Մարզային» սակագնային փաթեթի վաղաժամ դադարեցման դեպքում սահմանված տուգանքը:

Եթե «Մարզային» սակագնային փաթեթից օգտվելու պարտադիր ժամկետն ավարտվել է, ապա սույն կետով սահմանված կերպով սակագնային փաթեթի փոփոխության դեպքում բաժանորդը չի ստանում նոր սակագնային փաթեթին բաժանորդագրության դեպքում տրամադրվող Wi-Fi սարքավորման 1 դրամով օգտագործման իրավունքը, ինչպես նաև չի պարտավորվում մեկ տարի շարունակ օգտվել «Մարզային» սակագնային փաթեթից:

3. Հնարավոր չէ իրականացնել սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով Օպերատորի այլ սակագնային փաթեթներից «Մարզային» սակագնային փաթեթին:

4. Եթե Բաժանորդը կատարել է սակագնային փաթեթի փոփոխություն և միևնույն ամսվա ընթացքում օգտվել է երկու տարբեր սակագնային փաթեթներից, ապա տվյալ ամսվա ամսավճարը հաշվարկվում է ըստ օրերի՝ օգտագործած սակագնային փաթեթների ամսավճարների համամասնությամբ: Սակագնային փաթեթի փոփոխության ծառայությունը մատուցվում է առանց վճարի գանձման, և դրա ակտիվացման համար անհրաժեշտ նախապայման է ժամկետանց պարտքերի բացակայությունը:

5. Եթե անձը բաժանորդագրվել է «Մարզային» սակագնային փաթեթին, սակայն Օպերատորից անկախ հանգամանքների պատճառով Բաժանորդին չեն մատուցվել Ծառայություններ բաժանորդային պայմանագրի կնքման օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում, ապա «Մարզային» սակագնային փաթեթների պայմանները դադարում են գործել, և Բաժանորդը պարտավորվում է կա՛մ ներկայացնել Ծառայության սակագնային փաթեթի փոփոխության դիմում, կա՛մ Ծառայության մատուցման դադարեցման դիմում:

6. Հնարավոր չէ բաժանորագրությունը «Մարզային» սակագնային փաթեթին, եթե Բաժանորդի կողմից նշվող ծառայությունների մատուցման հասցեում նախկինում մատուցվել են ծառայություններ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից, և բաժանորդային

պայմանագիրը լուծվել է «Մարզային» սակագնային փաթեթի պայմանների կիրառության մեջ մտնելուց հետո:

7. Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:

8. Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով: